

է, 20. Ժող. ԺԲ, 6). ուր շոայլ Բիւզանդացիք ունէին մինչեւ անգամ «զսափորս ոսկիս» (Ոսկ. Թղթ. Ա, 603). եւ այս վերջինս հարկաւ սեղանի յատուկ էր քան մասանի: Իսկ Հրեայք՝ ինչպէս եւ ուրիշներ՝ կը գործածէին զայն գինի եւ իւղ տանելու կամ տալու այլոց (Թագ. Ա, Ա, 24. Գ, Ե, 11), եւ աղբիւրէն ջուր կրելու (Ծննդ. ԻԻ, 14 եւն): Ըստ Արիստոտելի՝ «զգինին ունի սափորն» նաեւ իբրեւ չափ (Դաւ. 408): Հարկաւ մեր քով ալ մի եւ նոյն ծառայութեանց յատուկ էր: — Սափորի եւ ուրիշ անօթոց կանթերը նմանութեամբ «ուսկուսք» կը կոչուէին (Վարք Հրց. Ի Հյկզ.):

Կոռծ: Նախորդին փոքրն էր եւ աւելի զիւրատար, Ս. Գրոց մէջ գործածուած պէսպէս յոյն բառերու դէմ, որոցմէ նմանագոյնն է Թերեւս ἄδρῆσκη, սափորիկ (Թագ. Բ, 20): Կը շինուէր «ի կաւոյ» (Երմ. ԺԹ, 1), եւ պաշտօն ունէր չափաւոր ջուր բերելու աղբիւրէն կամ տանելու հետի տեղ (Թագ. Ա, ԻԶ, 11. Գ, ԺԹ, 6. Գ, Բ, 20): Չեւր զանազան էր արեւելեայց մէջ (Վիգ. Բ, 1135). եւ մեր քով նոյն էր անշուշտ Պատարագի ժամանոցին հետ՝ որ կուժ մ'էր, եւ այսպէս ալ կոչուած է՝ «զկուժս զինւոյն» Ս.